ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտվող թեմա՝ Ազգային արժեքային համակարգի ձևավորումը հայոց պատմության դասերին

Հետազոտող ուսուցիչ՝ Եպրաքսյա Գաբրիելյան

Երևանի Աշոտ Նավասարդյանի անվան թիվ 196 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Ինչ ունեինք.....4

Ինչ եղավ 2018 թվականից հետո 6

Ինչ անենք հիմա.....8

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 12

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքում անդրադարձ ենք կատարել արդի շրջանում Հայոց պատմության դասերին աշակերտների մոտ ազգային արժեքային համակարգի ձևավորման կարևոր խնդրին:

Մեր օրերում խնդիրը շարունակում է խիստ կարևոր և արդիական մնալ: 2018թ. Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած ժողովրդավարական գործընթացները, ազգային ավանդություններին արհեստակորեն զուգակցվող միջազգայնացման կամ համաշխարհայնացմանը նպաստող օրակարգերի աստիճանական գործածությունը և վերջապես 2020թ. 44-օրյա պատերազմում մեր պետության պարտությունը առավել քան կարևոր է դարձնում այս խնդրի վերարժևորումը, բացերի և սխալների վերհանումը և ազգային արժեքային համակարգի նորովի մեկնաբանումը:

Դպրոցում ազգային արժեքային համակարգի դասավանդման առկա մարտահրավեները և հնարավոր լուծումները վեր հանելու նպատակով շեշտադրում ենք երեք կարևորագույն հարցերի.

Ինչ ունեինք

1991թ. անկախությունից հետո Հայաստանը որպես անկախ պետություն սկսեց ազգային պետության կառուցումը և կրթական համակարգում խորհրդային ուսումնառությամբ պատմությունը աստիճանաբար փոխարինվեց ազգային հենքի վրա հիմնված հայոց պատմության դասագրքային նյութով: Տասնամյակներով Հայոց պատմության դասագրքերի անընդհատ նորացումը, վերահրատարակման միջոցով մեր պատմության ուսումնասիրումը դառնում էր առավել ամբողջական և համապարփակ: Դպրոցական նյութով սահմանված մենք ուսումնասիրում էինք Հայկական լեռնաշխարհի սահմանների տեղագրությունը, հայկական տեղանունները և այլն.

Աշակերտները Հայոց պատմության առաջին թեմայից ծանոթանում են Հայկական լեռնաշխարհին՝ որպես հայի բնօրրան, Հայոց հայրենիք:

Ուսումնասիրման ընթացքում աշակերտները պատկերացում էին կազմում սեփական ժողովրդի հազարամյա պատմության, պատմության այնպիսի արժեքի ինչպիսին տեղաբնիկությունն է: Հայոց պատմության ուսումնասիրման հաջորդ կարևոր սահմանումը աշակերտների մոտ ձևավորվում է ազգային միասնության և միասնական հայկական անկախ պետականություն ունենալու գաղափարը: Պատմության դասագրքերում հստակ նշված են պետականության կարևորությունը որպես ժողովրդի անվտանգության երաշխիք, ժողովրդի խաղաղ արարման առաջին նախապայման, հայ գործիչների սխալ և կորստաբեր քաղաքականությունը, դավաճանությունը, հայ քաղաքական գործիչների և ղեկավարների անմիաբանությունը տարբեր դարաշրջաններում: Աշակերտի մոտ ձևավորվում էր միասնականության, անկախ պետության, պետական ու ազգային շահի գաղափար: Այս ամենը սկսում է ամբողջացնել ազգային արժեքային համակարգի գաղափարը:

Հայոց պատմության դասագրքերում մանրամասն ներկայացվում է XX դարի մեծագույն արհավիրքը՝ Հայոց մեծ Եղեռնը կամ Հայոց ցեղասպանությունը, որին

բախվեց հայ ժողովուրդը և որը շրջադարձային եղավ հայ ժողովրդի հետագա պատմության համար: Աշակերտները հստակորեն գիտակցում են պատմական անարդար և ապօրինի մոտեցումը, որը որդեգրվեց հայ ժողովրդի նկատմամբ հայկական կոտորածներից հետո: Այնուհանդերձ հայկական կոտորածները ոչ թե հուսալքություն այլ հիմնականում պահանջատիրություն են առաջացնում աշակերտների շրջանում: Ընդ որում պահանջատիրությունը մինչև 2018թ. բաժանվում էր երկու հիմնական հոսանքի.

1. աշակերտների մի մասը գտնում էին, որ ցեղասպանության միջազգային ճանաչումը և թուրքիայի նկատմամբ ճնշումը ի վերջո տալու էին իրենց արդյունքը
2. մյուս մասը համոզված էր, որ միայն Հայաստանի պարագայում է հնարավոր ստիպել թուրքիային ընդունել սեփական մեղքը

Ցեղասպանությունից հետո հարյուրամյակներ պետություն ունենալու բերկրանքից զուրկ հայ ժողովորդի 1918թ. մայիսի 28-ին պետություն ստեղծելու հանգամանքը և այդ թեմաների ուսումնասիրումը Հայոց պատմության դասերին աշակերտների շրջանում մեծ հետք և ազդեցություն է թողնում: Հատկապես հատկանշանական է հայկական բանակի հաղթանակների ամրագրումը բազմակի անգամ թվակազմով և հագեցվածությամբ առավել և նույն ցեղասպան նպատակներն ունեցող թուրքերի նկատմամբ:

Չնայած մոտ 2.5 տարվա գոյությանը Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության ուսումնասիրումը դպրոցում կարևոր է ազգային արժեհամակարգի ձևավորման տեսանկյունից, որի հիմքում դարձյալ ամրագրվում և կարևորվում է անկախ ու ամուր պետության, սեփական ուժերով հաղթանակներ կերտելու, Առաջին Հանրապետության հիմնադիր հայրերի, հերոս զինվորականների քայլերի արդյունավետության, հեռանկարային և կարևոր լինելու հանգամանքը:

Նորանկախ պետության անցած ճանապարհը ուներ առավելություններ և դժվարություններ: Ցանկացած աշակերտ այս կամ այն չափով առնչվում էր Արցախի հետ և մեր պատմության նորագույն շրջանում ուսումնասիրում Հայաստանի նորանկախ հանրապետության կերտման տասնմայակները մինչև արդի շրջան:

Նորանկախ Հայասատանի Հանրապետության պատմության ուսումնասիրումը նույնպես ծանր, բայց միևնույն ժամանակ ոգևորիչ է: 1980-ականների վերջերին

սկսվեց Ղարաբաղյան շարժումը, որը հայ ժողովրդի համար պատմական անարդարությունը խաղաղ կերպով վերացնելու հերթական փորձն էր: Շուտով հայ ժողովուրդը բախվեց երկու լրջագույն մարտահրավերի՝ Սպիտակի 1988թ, երկրաշարժ և ադրբեջանի կողմից հրահրված ցեղասպան պատերազմ: Հայաստանում անկախության գործընթացի ծավալմանը զուգահեռ թափ հավաքեց և հաղթանակով պսակվեց հայ ժողովրդի կողմից Արցախի համար մղվող ազատագրական պատերազմը 1991-1994թթ.:

Սակայն խնդրի վերջնական լուծման առկախումը, հայկական կողմի զիջողականությունն ու դանդաղկոտությունը առաջացրեցին լուրջ դժվարություններ: 10-մյակներ շարունակ Արցախի խնդրում առկա անորոշությունը, սահմանների փակ լինելը, Հայաստանի իշխանությունների վարած ներքին ու արտաքին քաղաքականությունը, բնակչության հետ «չխոսելը» նպաստեցին գործող համակարգի ճահճացմանը և դժգոհության աճին: 1991-ից հարյուր հազարավոր մարդիկ անվերադարձ լքեցին իրենց հայրենիքը: Յուրքանչյուր տարի մոտ 200 000 ՀՀ քաղաքացի մեկնում էր արտագնա ժամանակավոր աշխատանքի՝ կոտրելով հայկական ընտանիքների փաստացի միասնականությունը: 2016թ. տեղի ունեցած Ապրիլյան քառօրյա պատերազմը և այդ պատերազմի մասին Հայոց պատմության նորագույն շրջանի դասագրքերում ներկայացումը նույնպես ազգային արժեհամակարգ ձևավորող գործոններից, ազդակներից մեկն էր:

Ինչ եղավ 2018 թվականից հետո

2018թ. գարնանը Հայաստանում տեղի ունեցան ժողովրդավարական գործընթացներ, որոնք հանգեցրեցին երկրում իշխանափոխության: Իշխանափոխության և նախորդող բողոքի ակցիաներին, որոնք ուղղված էին Հայաստանի իշխանության դեմ մեծ ոգևորություն էր տիրում: Շատ մտավորականներ և գործիչներ խոսում էին Հայկական Ոչ բռնի թավշյա հեղափոխության առավելությունների և ընդհանուր առմամբ հայ հասարակության ազգային ու գաղափարական զարթոնքի մասին: Հեղափոխական շրջանում մեծ ազդեցություն և տարածում գտավ էյֆորիկ ֆոնը, որը տիրող համատարած ոգևորության պայմաններում դեռ ցույց չէր տալիս իր թերությունները:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների բոլոր օղակների մեծ մասը՝ ուսուցիչներից մինչև աշակերտներ, դասախոսներ ու ուսանողներ ակտիվ մասնակցություն ունեցան այս գործընթացներում: Թվում էր, թե համազգային զարթոնքն այլևս իրականություն է: Հեղափոխությունը ողջունելու կամ նրա ակտիվ մասնակիցը լինելու հանգամանքը նպաստում էր սեփական երկրում ստեղծագործելու ցանկության բարձրացմանը, ազգային արժեքների նորովի ու դրական լույսի ներքո ընկալմանը: Մարդկանց աչքերում հեղափոխությունը ընկալվում էր, որպես «հին, ճահճացած, չգործող» համակարգից ազատում:

Սակայն ժամանակի ընթացքում հեղափոխության պարագլուխները գալով իշխանության ցույց տվեցին իրենց կառավարական և քաղաքական բոբիկությունը: Հայաստանը չունեցավ թռիչքաձև տնտեսական զարգացում, հեղափոխական ամենակարևոր դրույթներն ու կարգախոսները աստիճանաբար դարձան երկրորդային նշանակության և Հայաստանի նոր իշխանությունների կողմից սկսեցին օգտագործվել, որպես պոպուլիստական գործիքներ:

Լուրջ հարված ստացավ ազգային արժեհամակարգը: Իշխանափոխությունից անմիջապես հետո թիրախավորվեց Հայ Առաքելական եկեղեցին: Ուղիղ եթերում Հայաստանի քաղաքացիները տեսնում էին հայ իրականության մեջ նախադեպը չունեցող ահաբեկչական գործողություն եկեղեցու նկատմամբ: Տեղի էր ունենում եվրոպական արժեհամակարգի քողարկված և որոշ դեպքերում բացահայտ ցուցադրում հասարակության մեջ: Հայոց պահանջատիրության ընդհանուր Հայկական հարցը մղվեց երկրորդ պլան: Փոխարենը հեղափոխական գործընթացներից 1 տարի անց Հայաստանի նոր իշխանությունները որոշեցին մեծ շուքով նշել «ՀՀ քաղաքացու օրը»:

Առաջին անգամ նորանկախ Հայաստանի պատմության մեջ մեր երկրի ղեկավարը դրականորեն էր արտահայտվում թշնամի երկրի ղեկավարի նկատմամբ: Տարածվում էր պացիֆիստական քաղաքականություն: Տեղի ունեցավ առճակատում Ռուսաստանի դաշնության հետ:

2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախում սկսվեցին լայնամասշտաբ ռազմական գործողություններ՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև: 44 օր տևած տարօրինակ և շատ չբացահայտված, անբացատրելի երևույթներով հանդեր ավարտվեց Հայաստանի ամոթալի պարտությամբ և հսկայական տարածքների կորուստով: Հայաստանի

ղեկավարը ստորագրեց անձնատվության պայմանագիր և թշնամի պետության ղեկավարի մակարդակով սկսեց ենթարկվել ցուցադրական ծաղանքների և նվաստացումների: Ազգային արժեհամակարգը այս ամենի արդյունքում լուրջ հարվածներ ստացավ: Ցավալին նաև կայանում է նրանում, որ Հայաստանի իշխանությունների կողմից վարվում է թշնամի երկու պետությունների՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ հաշտեցման, բարիդրացիության և ամեն տեսակի նվաստացուցիչ զիջումներ անելու քաղաքականություն:

Ինչ անենք հիմա

Մեր օրերում դպրոցներում հայ արժեքային համակարգի ձևավորումը Հայոց պատմության դասերին բախվել է լրջագույն խնդիրների և բարդությունների: Շատ բարդ և դժվար է դպրոցական առկա նյութի ուսուցմանման հենքի վրա ազգային արժեհամակարգի ձևավորում իրականացնել մեր օրերում ունենալով պետական իշխանության կողմից տրամագծորեն հակառակ դիրքորոշում: Ազգային արժեհամակարգի ձևավորման արդի մարտահրավերները փորձել ենք ներկայացնել Հայոց պատմության դասագրքերում առկա նյութի ընդհանուր բնույթի հետ, որպես հակասությունների շարք:

- Ցեղասպանություն

Թուրքիան ներկայացվում է որպես թշնամի, ցեղասպանություն գործած պետության իրավահաջորդ, որը մերժում է իր անցյալը և չի ընդունում իր մեղավորությունը այդ հարցում: Մինչև հիմա թուրքիան շարունակում է առաջ տանել իր պանթյուրքիստական երազանքի հայի համար կործանարար թեզը:

ՀՀ ներկա իշխանությունները ծայրահեղ քիչ են շոշափում ցեղասպանության և նրա թուրքիայի կողմից ճանաչման պահանջատիրության գաղափարը: Հայաստանի իշխանությունները գաղտնի բանակցություններ են փորձում վարել Թուրքիայի հետ:

- Եկեղեցի

Հայոց եկեղեցու պատմությունը հանրակրթական դպրոցում ուսումնասիրվում է որպես առանձին առարկա: Հայոց պատմության դասագրքերում ներկայացված է եկեղեցու համահավաք դերն ու ունեցած նշանակությունը մեր պատմության քրիստոնեական շրջանում: Կարևորվում է պետության անկախության շրջանում եկեղեցու միավորիչ և պետությանը աջակից լինելու դերը: Անկախության բացակայության ընթացքում նրա առաջնորդությունը և խաղացած ազգապահպան դերը ժողովրդի կյանքում:

ՀՀ բարձրագույն ղեկավարությունում ընդգրկված են բացահայտ աղանդավորական հոսանքների ներկայացուցիչները: Հայոց եկեղեցին պարբերաբար ենթարկվում է քարոզչական և տեղեկատվական հարձակումների: Նոր ուսումնական ծրագրերով նախատեսված է դպրոցից վերացնել Հայոց եկեղեցու պատմություն առարկան:

- Արցախ

Հայոց պատմության դասագրքերում Արցախը մշտապես ներկայացված է որպես Հայաստանի պատմականորեն անբաժան մաս և անվտանգության երաշխիք: Արցախի պայքարը ազատության և արդարության համար, ազատագրական պատերազմի հաջողությունները, Արցախում հայի ազատ ապրելու իրավունքի ամրագրման կարևորությունը:

Արցախյան 44 օրյա պատերազմից հետո պետական մակարդակով տարվում է զիջողականության քաղաքականություն: Պատերազմում պարտությունը, հասարակությունում տասնամյակներով կեղծ թեզերի ու բամբասանքների տարածումը շղթայական եղանակով բերեց այն բանին, որ ազատատենչ Արցախի գոյությունը հիմա կախված է տարածաշրջանում տեղակայված միջազգային խախաղապահ, ժամանակավոր առաքելությունից:

- Հասարակություն

Հայը Հայոց պատմության դասագրքերում հազարամյակներով իրավամաբ ներկայացվել է, որպես «քարից հաց քամող», խելացի և տաղանդաշատ ժողովուրդ: Այս հանգամանքը ապացուցվել է համաշխարհային հայտնություն ստացած շատ հայ գորիչներ ունենալու հանգամանքով: Միանշանակ է, որ ուսումնասիրելով Հայոց

պատմությունը հայ աշակերտին համակում էր բնականորեն հիմնավոր ստեղծագործական, աշխատասիրության զգացում, որը նրան ուղեկցում էր ամբողջ կյանքում:

Հիմա մեր հասարակության մեջ արհեստականորեն արմատավորվում է տգիտությունը, լայնորեն տարածվում է սուտը, սեփական ուժերի վրա անվստաության և ուրիշից օգնության սպասող հայի կերպարը: Դավաճանի կերպարը: Մեզանից խուճապահար փախչող թշնամու մեզանից հզոր, ուժեղ և ամենակարևորը՝ ճիշտ լինելու հիմնազուրկ և կեղծ թեզը:

- Աշխարհում մենք

Անկախությունից հետո անցնող 30 տարիների ընթացքում միջազգային մակարդակում Հայաստանը հետևողականորեն առաջ էր տանում Հայոց ցեղասպանությա ճանաչման համահայկական պահանջը: Ակտիվորեն աշխատանքներ էին տարվում Արցախի անկախության ճանաչման ուղղությամբ: Մեր թշնամի երկու հարևան պետությունների հետ մենք խոսում էին հավասարի դիրքերից: Նույնիսկ միջազգային գործընթացում ինչպիսին «Ֆուտբոլային դիվանագիտությունն» էր, որը առաջ քաշվեց 2008թ. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից, հայկական դիվանագիտությունը մնաց իր բարձրության վրա՝ աշխարհին ցույց տալով թուրքիայի հետադիմական և իր անցյալի հետ անհաշտ լինելը: Դասագրքերում ներկայացված էր մեր դիվանագիտության ակտիվությունն ու միջազգային մակարդակում բավականին ակտիվ գործակցությունը[1]:

Մեր օրերում կարելի է արձանագրել ոչ թե դիվանագիտություն չունենալը, այլ դրա բացակայությունը: Միջազգային մակարդակում մենք չենք պաշտպանում մեր շահերն ու իրավունքները: Մենք չճանաչեցինք Արցախի անկախությունը նույնիսկ պատերազմի օրերին: Մեր պետության ղեկավարությունը թուրք-ադրբեջանական տանդեմի պատերազմական հանցագործությունների, ցեղասպան ու ահաբեկման քաղաքականության, հակամարդկային արարքների, միջազգային կոնվենցիաների

[1] Դավիթ Սաֆարյան, Ֆուտբոլոային դիվանագիտության արձագանքները թուրքական մամուլում, http://ysu.am/files/04D_Safaryan.pdf

խաղտման ճչացող փաստերի նկատմամբ որդեգրել է ոչ միայն լուռ դիտողի այլ նաև այդ ամենով հանդերձ նրանց հետ հաշտեցմանը պատրաստ սուբյեկտի դեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փորձելով ամփոփել վերոնշյալ հետազոտական աշխատանքը կարող ենք նշել, որ անհրաժեշտ է առավել համապարփակ և լուրջ հետազոտություն իրականացնել թեմայում մատնանշված խնդիրներին, մեզ սպառնացող մարտահրավերներին ուսումնասիրության և լուծումներ առաջադրելու ուղղությամբ:

Պետք է ուսումնասիրել առաջին հերթին ինչպես կարող էր հազարամյա արմատներ ու պատմություն ունեցող մի ժողովուրդ այսքան հետադիմել:

Միանշանակ է, որ Հայաստանը բախվել է լրջագույն մարտահրավերների և այս ամենի պարագայում ծայրահեղ դժվարացել է ազգային արժեքային համակարգի ձևավորում իրականացնել Հայոց պատմության դասերին:

Միևնույն ժամանակ պետք է հասկանալ, որ ցանկացած թեկուզ կործանարար սխալ և ձախողում իրենից ներկայացնում է փորձ, որի ընկալումը թույլ կտա մեզ ապրել և կրթությունը կազմակերպել առավել արդյունավետ: Վերջին գործընթացները, դրանց ծայրահեղ վատ հետևանքներն ուսումնասիրելով, համաբերելով, համեմատելով և հետևություններ անելով հնարավոր կլինի իրապես դաստիարակել Ազգային արժեքային համակարգ:

Հարց կարող է առաջանալ.

2018-ի հեղափոխությունը, ձախողումներն երկրի ներսում ու պարտությունը պատերազմում մի թե դրական կարող են համարվել այդ դեպքում:

Պատասխանը միանշանակ է. Ոչ

1991թ. մենք ունեինք ժամանակ ավելի հզոր պետություն կառուցելու, ազգային արժեքային համակարգի ձևավորմանը էլ ավելի մեծ կարևորություն տալու, պատերազմում հաղթելու և մեծ հաշվով խուսափելու մեր օրերի դաժան իրականությունից:

Մենք հիմա ապրում ենք մեր իրականությունում և հուսալքությունն ու դժվարություններին չդիմադրելը առաջին հերթին մարդ արարածի համար հակաբնական է:

Դասերին վերջին իրադարձությունների մասին խոսելուց չպետք է խուսափել: Պետք է պարբերաբար ու լրացուցիչ խոսել մտքեր փոխանակել ու

համեմատություններ անցնել տարբեր դարաշրջանների հետ: Հայոց պատմության ուսումնասիրումը մեզ որպես ասվածի ապացույց մատնանշում է մեր պատմության էլ ավելի դաժան և անուսալի թվացող շրջափուլերը, որոնց դիմակայելու ուժ իր մեջ վերջիվերջո գտել է հայ ժողովուրդը: Հենց սա էլ պետք է ծառայի առաջին նախադեպը ազգային արժեքային համակարգը Հայոց պատմության դասին աշակերտների մոտ ձևավորելու գործում: Աշակերտը պետք է ընկալի ազգային արժեհամակարգի կարևորությունը իր, իր ընտանիքի և սեփական պետության անվտանգության ապահովման տեսանկյունից: Ազգային արժեհամակարգը ինչպես եղել է այնպես էլ պետք է շարունակի մնալ հայի համար որպես գերագույն արժեք:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Աշիկյան Արմենուհի, Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը նոր սերնդի դաստիարակության գործում,
2.http://www.ysu.am/files/18-1549440667-.pdf
3.Դավիթ Սաֆարյան, Ֆուտբոլային դիվանագիտության արձագանքները թուրքականմամուլում, http://ysu.am/files/04D_Safaryan.pdf